**Արձանագրություն №2** /Протокол №2/

**գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի** / внеочередное заседание оценочной комиссии/

## 1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքի ձեռքբերման, նիստի անցկացման մասին

/Данные о заказчике, процедуре (коде), о приобретении товаров, о проведении заседания/

| | |
|---|---|
| **Պատվիրատու** / Заказчик | **«ՀԱԷԿ» ՓԲԸ** / ЗАО “ААЭК” |
| **Գտնվելու վայրը** / Адрес | **ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր** / РА, Армавирский марз, г. Мецамор |
| **Ընթացակարգի ծածկագիրը** / Код процедуры | **«ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-01/22»** |
| **Ձեռքբերվող ապրանքի անվանումը** / Наименование приобретаемого товара | **«Էլեկտրական խոզանակ»** / "Электрическая щетка" |
| **Նիստի անցկացման վայրը** / Место проведения заседания | **«ՀԱԷԿ» ՓԲԸ, վարչական շենք** / ЗАО “ААЭК”, административный корпус |
| **Նիստի անցկացման օրը և ժամը** / Дата и время поведения заседания | **16.12.2021թ. ժամը 11:00**, 16.12.2021г. 11:00ч. |
| **Նիստի անցկացման նպատակը** / Цель проведения заседания | **Հայտարարության և հրավերի տեքստերի հաստատում** / Утверждение текстов объявлений и приглашений |

## 2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի մասին

/Данные о членах комиссии, участвующих в заседании/

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ** / Председатель комиссии | **Ա. Ղազարյան** / А. Казарян | **ԳՄԾ պետի ժ/պ** / Вр и/о НСЗС |
| **Հանձնաժողովի անդամներ** / Члены комиссии | **Վ. Սահակյան** / В. Саакян | **ԷԱ պետի տեղակալ** / ЗН ЭЦ |
| | **Հ. Գալստյան** / Г. Галстян | **ԷԱ ավագ վարպետ** / Ст. мастер ЭЦ |
| **Քարտուղար** / Секретарь | **Ա. Ախոյան** / А. Ахоян | **ԳԸԲ մասնագետ** / Специалист ОЗП |

## 3. Հարցումներ և պարզաբանումներ/

/Запросы и разъяснения/

| | |
|---|---|
| **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումներ/** Внесенные в приглашение изменения, запросы и разъяснения | 14.12.2021թ. մասնակցի կողմից ստացվել է հարցում, հետևյալ բովանդակությամբ.<br>**Հարցադրում 1:** «Հարգելի՛ գործընկեր: Պահանջվող էլեկտրական խոզանակների համար հրավերի տեխնիկական բնութագրերի բաժնում, որպես լրացուցիչ պահանջ ներկայացված է. «Անվտանգության դասը 4՛ ըստ НП-001-97: Ապրանքները պետք է ընդունվեն ըստ որակի պլանի, որը պետք է համապատասխանի РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций)՝ առանց լիազորված կազմակերպության ներգրավմամբ կամ ըստ արտադրող երկրում գործող ընդունման համանման կարգի»: НП-001-97 փաստաթուղթը մշակված է "Росатомнодзор"- ի կողմից, իսկ РД ЭО 1.1.2.01.0713-2013 –ը ընդհանրապես հանդիսանում է "Росатом" կոնցեռնի ներքին նորմատիվ փաստաթուղթ: ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ նշված է, որ. "ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:" Պահանջի հաջորդ մասը՝ «ըստ արտադրող երկրում գործող ընդունման համանման կարգի» արտահայտությունը, հստակ չի բնութագրում, թե ի՞նչ կարգի մասին է խոսքը, ըստ կոնկրետ ո՞ր միջազգային ստանդարտներին է վերաբերվում: Ֆրանսիական Mersen կազմակերպությունը, որի արտադրանքը, կամ դրա համարժեքն է պահանջվում, ունի մասնաճյուղեր Եվրոպական, Ասիական, Ամերիկյան, Աֆրիկյան 40 ից ավելի երկրներում և Ավստրալիայում: Ըստ էության կա պոտենցիալ հնարավորություն պահանջվող ապրանքները մատակարարելու վերը նշված երկրներից յուրաքանչյուրից, որոնք արտադրող երկրներ չեն հանդիսանում և ունեն երկրի ներսում գործող սեփական կարգ: Որևէ երկրի ներսում գործող կարգին հղում անելը, առանց միջազգային ստանդարտներ նշելու, մեր կարծիքով հակասում է ՀՀ Գնումների մասին Օրենքին, քանի որ կոնկրետ երկրի ներսում գործող կարգը միջազգային ստանդարտ չի հանդիսանում: Այսպիսի պահանջներով ընթացակարգի կազմակերպումը կարող է իրավական խոչընդոտներ առաջացնել գնման առարկայի ընդունման փուլում: Հաշվի առնելով վերը նշվածը խնդրում եմ ուսումնասիրել և ստուգել նշված պահանջի համապատասխանությունը ՀՀ Գնումների մասին օրենքի 13 րդ հոդվածին և նշել միջազգային այն ստանդարտները, նորմատիվ, տեխնիկական փաստաթղթերը, որոնց պետք է համապատասխանի գնման առարկան:»<br>Իսկ 15.12.2021թ. ստացվել է հարցում, հետևյալ բովանդակությամբ.<br>**Հարցադրում 2:** «Հարգելի գործընկեր, խնդրում ենք տրամադրել խոզանակի գծագիրը:»<br><br>14.12.2021 г. со стороны участника был получен запрос со следующим содержанием:<br>**Вопрос 1**: "Уважаемый партнер, в разделе технической характеристики приглашения для требуемых электрических щеток в качестве дополнительного требования представлен "Класс безопасности 4՛ по НП-001-97. Товары должны приниматься согласно плана качества по РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций), без привлечения уполномоченной организации), или по действующим аналогичным правилам приемки, страны производителя. Документ НП-001-97 разработан со стороны "Росатомнодзор", а РД ЭО 1.1.2.01.0713-2013 вообще является внутренним нормативным документом концерна "Росатом". В ч. 3 статьи 13 Закона РА "О закупках" четко отмечено, что "исходя из особенностей предмета закупки, их характеристики по возможности включают четкое описание условий, относящихся к качеству, стандарту, безопасности приобретаемого товара, работы или услуги, условным знакам, терминологии, упаковке, разгрузке, размеру, проектам, а также к другим характеристикам предмета закупки, основанное на международных стандартах и действующих в Республике |

Армения нормативно-технических документах, а в случае их отсутствия-на временных технических условиях". Следующая часть требования-выражение "или по действующим аналогичным правилам приемки, страны производителя", не ясно характеризует, о каком порядке идет речь, по каким конкретно международным стандартам. Французская организация Mersen, продукция которой или ее аналог требуется, имеет филиалы в более чем 40 странах Европы, Азии, Америки, Африки и Австралии. По сути, есть потенциальная возможность поставлять требуемые товары из каждой из вышеперечисленных стран, которые не являются производителями и имеют действующий внутри страны собственный порядок. Ссылка на действующий в какой-либо стране порядок, без указания международных стандартов, на наш взгляд, противоречит закону РА "О закупках", поскольку действующий внутри страны порядок не является международным стандартом. Организация процедуры с такими требованиями может создать правовые препятствия на этапе принятия предмета закупки. Учитывая вышеизложенное, прошу изучить и проверить соответствие указанного требования статье 13 Закона РА "О закупках" и указать международные стандарты, нормативные, технические документы, которым должен соответствовать предмет закупки".

А 14.12.2021 г. был получен запрос со следующим содержанием:

**Вопрос 2:** "Уважаемый партнер, пожалуйста, предоставьте чертеж щетки."

Արտահերթ նիստը հրավիրվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի հանձնարարությամբ: Հանձնաժողովի անդամներին ներկայացվել է մասնակիցներից ստացված հարցումների բովանդակությունները, որոնք նաև համակարգող քարտուղարի կողմից ներկայացվել են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին:

Ի պատասխան մասնակիցների կողմից ստացված հարցումներին, գնահատող հանձնաժողովը պարզաբանեց.

**Պատասխան 1:** Նշված НП-001-97 (Общие положения обеспечения безопасности атомных станций) և РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций) փաստաթղթերը՝ համաձայն «ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրենի հրամանի, ներառված են ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումը կանոնակարգող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի ցանկում:

Համաձայն НП-001-97 փաստաթղթի, ապրանքներն ունեն անվանգության 4-րդ դաս, հետևաբար նշված ապրանքները պետք է փորձարկվեն և ընդունվեն համաձայն РД ЭО 1.1.2.01.0713-2013 փաստաթղթում նկարագրված կարգի: Այլ երկրներում գործունեություն ծավալող ընկերությունը, որն ունի ատոմակայանների համար արտադրանք տալու համապատասխան թույլտվություն (կամ լիցենզիա) և որի արտադրանքն ունի անվտանգության 1-4 դաս (կամ տվյալ երկրում գործող համարժեք դասակարգում), իր արտադրանքը արտադրում, փորձարկում և պատվիրատուին է հանձնում համապատասախան այդ երկրում գործող կարգի, որը համանման է կամ համարժեք մեր կողմից նշված РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций) փաստաթղթին:

**Պատասխան 2:** Գծագիր կկցվի համակարգում:

Внеочередное заседание созвано по поручению Генерального директора ЗАО "ААЭК" Э. Мартисорсяна. Членам комиссии было представлено содержание полученных от участников запросов, которые также были представлены координационным секретарем руководителю ответственного подразделения.

В ответ на полученные участниками запросы, оценочная комиссия разъяснила.

**Ответ 1:** Указанные НП-001-97 (Общие положения обеспечения безопасности атомных станций) и РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций) документы, согласно приказу Генерального директора ЗАО "ААЭК", включены в перечень нормативно-технических документов, регламентирующих безопасную эксплуатацию ААЭС.

Согласно документу НП-001-97, товары имеют 4-й класс безопасности, следовательно, указанные товары должны быть проверены и приняты в соответствии с порядком, описанным в документе РД ЭО 1.1.2.01.0713-2013. Компания, осуществляющая деятельность в других странах, имеющая соответствующее разрешение (или лицензию) на выдачу продукции для атомных станций и продукция которой имеет 1-4 класса безопасности (или эквивалентную классификацию, действующую в данной стране), производит, испытывает свою продукцию и выдает заказчику в соответствии с действующим в этой стране порядком, что аналогично или эквивалентно указанному нами документу РД ЭО 1.1.2.01.0713-2013-ին (Положение об оценке соответствия в форме приемки и испытаний продукции для атомных станций).

**Ответ 2:** Чертеж будет прикреплен в системе.

## 4. Տեղեկություններ հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

/Данные о месте, дате и времени следующего заседания комиссии/

| | |
|---|---|
| **Նիստի անցկացման օրը /** День проведения заседания | **Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին** / Рабочий день, следующий за подведением итогов аукциона в 11:00ч. |
| **Նիստի անցկացման վայրը /** Место проведения заседания | **«ՀԱԷԿ» ՓԲԸ, վարչական շենք** / ЗАО “ААЭК”, административный корпус |

**Հանձնաժողովի նախագահ՝**
Председатель комиссии ______ **Ա. Ղազարյան** / А. Казарян

**Հանձնաժողովի անդամներ՝**
Члены комиссии ______ **Վ. Սահակյան** / В. Саакян

______ **Հ. Գալստյան** / Г. Галстян

**Համակարգող-քարտուղար՝**
Координирующий секретарь ______ **Ա. Ախոյան** / А. Ахоян